
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ԳՈՐԾԱՐ ՄԻՍՈՆՅԱՆ

Հայաստանի ֆինանսական համակարգում տեսակարար մեծ կշիռ ունի բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90%-ը: Այդ իսկ պատճառով ֆինանսական համակարգի կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում է բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Անհրաժեշտություն է առաջանում ձևավորել ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության շարունակաբար զարգացող այնպիսի միջավայր, որը կապահովի ֆինանսական համակարգի ռիսկերի և զարգացման լավագույն համակցություն¹:

Ներքին հսկողությունը, որպես այդպիսին, գոյություն ունի ցանկացած քիչ թե շատ էական տնտեսական գործընթացում: Յուրաքանչյուր կազմակերպության գործունեության մեջ զուտ գործառնական համակարգի հետ մեկտեղ գործում է ներքին վերահսկողությունը, որն ընդհանուր գծերով կանոնների, կանոնակարգերի, հաշվետվությունների և հաշվառման համակարգերի ամբողջություն է: Ներքին վերահսկողությունը կազմակերպության ռիսկերի վերահսկման գործիք է և ներառում է ռիսկերի կառավարման բնորոշ գծեր²:

Ներքին հսկողության արդյունավետ համակարգի կազմակերպումն անհնար է առանց ռիսկերի հսկողության: Բանկերի ներքին հսկողության համակարգի գործունեության արդյունավետությունը ենթադրում է բանկի գործունեության հետ կապված ռիսկերի սահմանում, ժամանակին բացահայտում, գնահատում և շարունակական կառավարում: Ներքին հսկողության մեխանիզմները անհրաժեշտ է վերանայել նոր կամ նախկինում հսկողությունից դուրս մնացած ռիսկերի հայտնաբերման դեպքում:

Բանկի հնարավոր ռիսկերը ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի, ակտիվների, պասիվների և շահույթի վրա:

Բանկի կողմից ռիսկի իրականացվելիք վերլուծությունը նկատի է ունենում հավանական ծայրահեղ հանգամանքների/իրավիճակների առկայությունը (սթրես սցենարներ, SWOT վերլուծություններ, ռիսկերի չափման հա-

¹ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի 2012-2014 թթ. ռազմավարություն, www.cba.am

² Տե՛ս Ա. Իվանյան, Տ. Եսայան, Բանկային վերահսկողություն և աուդիտ, Եր., 2003, էջ 28:

մար կիրառվող մատրիցներ), որի հիման վրա բանկը սահմանում է արտակարգ հանգամանքի/իրավիճակի համար ձեռնարկվելիք միջոցառումներ:

Բանկը իրականացնում է ներքին միջավայրում հնարավոր (արտակարգ) սթրեսային իրավիճակների կանխարգելմանն ուղղված ընթացակարգեր և միջոցառումներ և վերահսկում է այն ռիսկերը, որոնք սպառնում են նրա գործունեությանը: Վերահսկումը կատարվում է այնպես, որ հստակ կապ ապահովվի բանկի ընդհանուր ռիսկի մակարդակի և ֆինանսական միջոցների միջև: Ելնելով դրանից՝ ներքին հսկողության համակարգը ներառում է բանկի համարժեք կապիտալիզացիայի մոնիթորինգի իրականացմանն ուղղված ընթացակարգեր և միջոցառումներ:

Բանկային ռիսկերի կառավարման նախադրյալը սկսում է այն պահից, երբ յուրաքանչյուր բանկի ղեկավարություն պարտավորվում է իր գոյության համար որոշակի արժեքներ տրամադրել իր բաժնետերերին: Բանկի բոլոր ստորաբաժանումներն առնչվում են անորոշությունների հետ, ինչը ղեկավարության համար յուրահատուկ մատրահավեր է, որը նրան ստիպում է պարզել, թե ինքն ինչ կարգի անորոշություններ կարող է ընդունել, և դրանցից որն է ի գորու հարված հասցնելու բանկի արժեքների աճին:

Անորոշությունն իրենից ներկայացնում է թե՛ ռիսկեր, թե՛ հաջողություններ, որոնք կարող են բարձրացնել և նվազեցնել բանկի արժեքները: Բանկային ռիսկերի կառավարումը ղեկավարությանը հնարավորություն է տալիս արդյունավետորեն տարանջատելու ռիսկերի և հաջողությունների մասով անորոշությունները, ինչպես նաև արժեքներ ստեղծելու համար ունենալ համապատասխան միջոցներ:

Բանկի ակնկալվող արժեքները մաքսիմալացվում են, երբ ղեկավարությունը որոշակի ռազմավարություն մշակելուն և նպատակներ սահմանելուն զուգահեռ, հավասարակշռված աճի, նպատակների իրականացման և դրանց հետ կապված ռիսկերի կանխարգելման համար ազդեցիկ ու արդյունավետ ռեսուրսներ և վերահսկողության մեթոդներ է կիրառում: Ռազմավարությունը երկարաժամկետ նպատակների, գերակայությունների ու գործողությունների, ինչպես նաև դրանց իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման գլխավոր ծրագիրն է³: Այդ ծրագիրն իրագործելու համար բանկը պետք է կառավարի դրա հետ կապված բոլոր ռիսկերը:

Բանկային ռիսկերի կառավարումը ներառում է⁴.

Ռիսկի ախորժակ և ռազմավարություն: Ղեկավարությունը, ռազմավարական այլընտրանքները գնահատելու և մնացորդային ռիսկերը հաղթահարելու մեխանիզմներ ստեղծելով, սահմանում է յուրաքանչյուր ոլորտի ռիսկի ախորժակը:

Ռիսկերին արձագանքելու որոշումների ընդունում: Բանկային ռիսկերի կառավարումն իրականացնող մարմինը սահմանում է խիստ պայմաններ և այլընտրանքներ՝ ռիսկերին արձագանքելու համար, համա-

³ Տե՛ս **Յու. Մ. Սուվարյան**, Մենջմենթ, «Տնտեսագետ», Եր., 2002, էջ 89:

⁴ Տե՛ս www.coso.org/documents/COSO_ERM_ExecutiveSummary.pdf, page 2

պատասխան գործիքներ և միջոցներ է կիրառում ռիսկերից խուսափելու, նվազեցնելու և ընդունելու համար:

Անակնկալների ու կորուստների նվազեցում: Բանկի ստորաբաժանումները ձեռք են բերում պոտենցիալ իրադարձությունները ճանաչելու և դրանց արձագանքելու հմտություն՝ նվազեցնելով ծախսերի և կորուստների հետ կապված անակնկալները:

Բանկային բազմապիսի ռիսկերի խաչաձև ճանաչում և հաղթահարում: Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար բախվում է տարատեսակ ռիսկերի հետ, որոնք ազդում են բանկի տարբեր հատվածների վրա, և բանկային ռիսկերի կառավարումը մատչելի է դառնում, երբ միասնական են արձագանքում միջանկյալ ազդեցություններին և բազմապիսի ռիսկերին:

Հնարավորությունների չափում: Պոտենցիալ իրադարձությունների ամբողջական միջակայքը որոշելու համար ղեկավարությունը պետք է հստակ դիրքորոշում ունենա՝ ինչպես նաև ճանաչի և քաջատեղյակ լինի սեփական հնարավորություններին:

Կապիտալի օգտագործման բարելավում: Ռիսկային տեղեկատվության ձեռքբերումը ղեկավարությանը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատելու կապիտալին առնչվող խնդիրները և հասնելու նրա արդյունավետ տեղաբաշխմանը:

Բանկային ռիսկերի կառավարմանը վերաբերվող վերոնշյալ գործիքները ղեկավարությանը օգնում են իրականացնելու բանկի բազմաբնույթ գործառույթները և հասնելու շահութաբերության նշանակետին, ինչպես նաև ակտիվ գործունեության միջոցով կանխելու ռեսուրսների կորուստները:

Բանկային ռիսկերի կառավարումը նպաստում է հաշվետվությունների արժանահավատությանն ու համապատասխանությանը օրենքներին ու ընդունված կարգերին, օգնում է բանկին խուսափելու հեղինակությանը վերաբերող վտանգներից և այլ նմանատիպ միջադեպերից: Ընդհանուր առմամբ, բանկային ռիսկերի կառավարումը բանկին հնարավորություն է տալիս ստանալու այն, ինչին ձգտում է, և այդ ճանապարհին խուսափելու ձախողումներից և այլ անակնկալներից:

Իրադարձություններ / ռիսկեր և հնարավորություններ⁵

Իրադարձությունները բանկի գործունեության վրա կարող են ունենալ կամ բացասական, կամ դրական ազդեցություն: Բացասական ազդեցությամբ ռիսկեր պարունակող իրադարձությունները կարող են խոչընդոտել բանկի արժեքների ստեղծմանը կամ խեղաթյուրել այն: Դրական ազդեցությամբ ռիսկեր պարունակող իրադարձությունները ընդհանուր առմամբ կարող են դրականորեն ազդել բանկի նպատակների իրականացման վրա և աջակցել արժեքների ստեղծմանն ու պաշտպանմանը: Ղեկա-

⁵ Տե՛ս The IIA Reasearch Foundation, «Risk Assessment in Engagement Planning», Florida, 2009, էջ 100:

վարությունն ուղղում է իր հնարավորությունները բանկի ռազմավարությանն ու նպատակների սահմանման գործընթացին՝ այսպիսով ձևավորելով նախագիծ պոտենցիալ հնարավորություններ ձեռք բերելու համար:

Բանկային ռիսկերի կառավարման սահմանումը

Բանկային ռիսկը բանկային գործունեության առանձնահատկություններից բխող երևույթ է և այն հնարավոր հավանականությունն է, որ ակնկալվող և չնախատեսված դեպքերը կարող են բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի կամ շահույթի վրա⁶:

Ինչ վերաբերում է բանկային ռիսկերի կառավարմանը, ապա այն տնօրենների խորհրդի, ղեկավարության կամ այլոց կողմից իրականացվող գործընթաց է, երբ մշակվում է որոշակի ռազմավարություն՝ նպատակ ունենալով ճանաչելու տվյալ ստորաբաժանման վրա ազդեցություն ունեցող բոլոր հնարավոր իրադարձությունները, հաղթահարելու ռիսկերը և ստորաբաժանման խնդիրների իրականացման համար տրամադրելու իմաստալից երաշխիքներ:

Հիմք ընդունելով այս սահմանումը՝ կարող ենք ասել, որ բանկային ռիսկերի կառավարումն ըստ էության իրենից ներկայացնում է⁷.

- բանկային համակարգում իրականացվող շարունակական և անխափան գործընթաց,

- ներգործում է բանկի յուրաքանչյուր մակարդակում իրականացվող միջոցառումների վրա,

- կիրառվում է բանկի ռազմավարական նպատակները հաստատելիս,

- ներառում է ռիսկերի պորտֆելի ամբողջական վերահսկում,

- կոչված է ճանաչելու հնարավոր վտանգները, և դրանց իրականացումը դեպքում՝ բանկի վրա ունենալիք ազդեցությունը, ռիսկերի հաղթահարման հնարավորությունները,

- մի մեխանիզմ է, որով բանկը կարող է հասնել իրարից տարբեր, բայց մասամբ համընկնող նպատակների իրականացման:

Ռիսկերի կառավարման սահմանումից կարող ենք հիմնավոր գաղափար կազմել այն մասին, թե բանկը ինչպես հաղթահարի ռիսկերը՝ ստեղծելով որոշակի բազա:

Նպատակների իրականացում

Բանկի առաքելության և տեսանելիության ենթատեքստում ղեկավարությունը հաստատում է ռազմավարական նպատակներ և ընտրում ռազմավարությունը: Բանկային ռիսկերի կառավարումն ուղղված է կազմակերպության նպատակների իրականացմանը, որոնք բաժանվում են չորս խմբի⁸.

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 125:

⁷ Տե՛ս The IIA Research Foundation, «Position paper», Florida, 2011, էջ 11:

⁸ Տե՛ս www.coso.org/documents/COSO_ERM_ExecutiveSummary.pdf, էջ 3:

- **ռազմավարական նպատակներ**՝ բանկին աջակցելով՝ հասնել նրա առաքելությանը համահունչ բարձր արդյունքների,

- **գործառնական նպատակներ**՝ բանկի ռեսուրսներն օգտագործելով արդյունավետ՝ ազդեցիկ կերպով իրականացնել գործարար և կառավարչական գործընթացները,

- **հաշվետվական նպատակներ**՝ ապահովել նպատակային կամ պարբերական հաշվետվությունների արժանահավատությունը,

- **օրենսդրությանը հետևելու նպատակներ**՝ գործել ընդունված օրենքներին, կարգերին, ներքին իրավական ակտերին համապատասխան:

Նպատակային ոլորտների դասակարգումը հնարավորություն է տալիս կենտրոնանալու բանկային տարբեր տեսակի ռիսկերի կառավարման վրա, տարբերակելու, թե յուրաքանչյուր դասի նպատակից ինչ կարելի է սպասել:

Քանի որ նպատակները վերաբերում են բանկի վերահսկողությանը ենթակա ռազմավարության, հաշվետվությունների, օրենքների ու կանոնակարգերի համապատասխանության հուսալիությանը, ուստի բանկային ռիսկերի կառավարումը հնարավորություն է տալիս երաշխավորելու, որ բանկի ղեկավարությունն ու խորհուրդը ժամանակին և հավուր պատշաճի տեղեկացված են այն մասին, որ բանկը կանոնակարգված ձգտում է հասնել իր նպատակներին:

Բանկային ռիսկերի կառավարման բաղադրիչները

Գոյություն չունի ռիսկերի կառավարման միանման համակարգ բոլոր բանկերի համար: Պատճառն այն է, որ շուկայական պայմանները ու կազմակերպչական կառուցվածքները միմյանցից տարբերվում են: Յուրաքանչյուր բանկ, ըստ իր կարիքների և իրավիճակի, պետք է մշակի ռիսկերի կառավարման սեփական համակարգը, որը ուղիղ համեմատական է բանկի չափսերին, գործառնությունների բարդությանը և վերջիններիս տեսակներին ու աշխարհագրական տարածքներին: Սակայն գործընթացներում գոյություն ունեն որոշակի բաղադրիչներ, որոնք պարտադիր պետք է հաշվի առնվեն ռիսկերի ճկուն կառավարում իրականացնելու համար: Այդ բաղադրիչներն են⁹:

1. ներքին վերահսկվող միջավայր, որը բնորոշում է բանկի յուրաքանչյուր ոլորտում ստեղծված միջավայրը, այսինքն՝ թե ինչպես է ռիսկն ընդունվում կազմակերպության աշխատակիցների կողմից, և ինչպես են նրանք արձագանքում: Ներքին միջավայրը ներառում է նաև ռիսկերի կառավարման և դրանց հավանականության փիլիսոփայություն, գործընթացներում արդարություն, բարոյական արժեքներ ստեղծելու և ապահովելու էականություն:

⁹ Տե՛ս «Բանկային ռիսկերի կառավարումը», Բանկի բաժնետերերի և խորհրդի ուղեցույց, Եր., 2003, էջ 18:

2. Նպատակների սահմանում. Մինչ տվյալ ոլորտի ղեկավարը կսկսի բացահայտել այն պոտենցիալ դեպքերը, որոնք կարող են ազդել տվյալ ստորաբաժանման գործունեության վրա պետք է արդեն հստակեցված լինեն նպատակները: Ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավարին հավաստիացնում է, որ նա հնարավորություն ունի նպատակները այնպես սահմանելու, գործընթացներն այնպես ընտրելու, որ դրանք նպաստեն կազմակերպության առաքելությանը և հնարավոր ու մնացորդային ռիսկերի մեղմացմանը:

3. Ռիսկերի նույնականացում. այն ուղղված է գոյություն ունեցող կամ շուկայական, կամ նախաձեռնությունների պայմանների փոփոխության հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերի ճանաչմանը: Ներքին և արտաքին այն իրադարձությունները, որոնք կարող են ազդել կազմակերպության նպատակների իրականացման ընթացքի վրա, պետք է լիովին պարզվեն՝ ըստ հնարավորության և ազդեցության: Հնարավորությունները ղեկավարության կողմից պետք է հաշվի առնվեն ռազմավարության և նպատակների ձևավորման ժամանակ: Ռիսկի նույնականացումը շարունակական գործընթաց է և պետք է իրականացվի ինչպես բանկի կողմից իրականացվող առանձին գործառնությունների, այնպես էլ ընդհանուր ձևավորված ներդրումային պորտֆելի մակարդակով:

4. Ռիսկերի գնահատում. գնահատվում են ռիսկերի հավանականությունն ու ազդեցությունը, կիրառվում է ռիսկերի գնահատման որակական և քանակական մեթոդների համակցություն: Ռիսկերի ամբողջական գնահատումը ներառում է ինչպես կառավարելի, այնպես էլ անկառավարելի ռիսկերը: Ռիսկերի չափման լավ համակարգերը գնահատում են ինչպես բանկի կողմից իրականացվող առանձին գործառնությունների, այնպես էլ ընդհանուր ձևավորված ներդրումային պորտֆելի ռիսկայնությունը:

5. Ռիսկերին արձագանքում. ղեկավարությունն իրականացնելով մի շարք միջոցառումներ, ընտրում է ռիսկերին արձագանքելու մեթոդներ՝ ռիսկերից խուսափում, ընդունում, նվազեցում, տեղաբաշխում: Սա հնարավորություն է տալիս ռիսկերը հասցնելու թույլատրելի մակարդակի:

6. Ռիսկերի վերահսկման մեխանիզմ. այս դեպքում բանկի քաղաքականությունն ու արարողակարգերն այնպես են մշակվում և տեղակայվում, որ խելամիտ երաշխիք ապահովեն ժամանակին արձագանքելու առաջացող ռիսկին:

7. Ռիսկերի մասով տեղեկատվություն և հաղորդակցություն. ներքին հսկողության օպերատիվությունը մեծապես կախված է արժանահավատ ու ամբողջական տեղեկատվություն և արդյունավետ հաղորդակցություն ապահովող կազմակերպական կառուցվածքից: Ռիսկերի կառավարման արդյունավետ միջոցներից է ճշգրիտ տեղեկատվությունը ժամանակին և համապատասխան մարդկանց հասցնելը: Տեղեկատվության հոսքը աշխատողների միջև պետք է ապահովված լինի վերից վար (բանկի ղեկավարությունից մինչև բանկի անձնակազմ) և հակառակը:

8. Ռիսկերի մոնիտորինգ. բանկի գործունեության դինամիկ զարգացման նպատակով բանկին անհրաժեշտ է իրականացնել մոնիտորինգ և տալ գնահատականներ, որից կերևա, որ ռիսկերի կառավարման ամբողջ գործընթացը գտնվում է ընթացիկ և պարբերական հսկողության տակ, և անհրաժեշտության դեպքում կատարվում են ուղղումներ: Մոնիտորինգի հաշվետվությունները պետք է լինեն բավարար պարբերականությամբ, ճիշտ ժամանակին և հասու լինեն բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման համար:

Բանկային ռիսկերի կառավարումը բնավ էլ սովորական գործընթաց չէ, երբ մեկ բաղադրիչը կարող է ազդել միայն հաջորդի վրա, այլ բազմակողմանի, կրկնվող այնպիսի գործընթաց է, որի դեպքում ցանկացած բաղադրիչ կարող է ազդել մյուսների վրա:


Բանկի նպատակների և ռիսկերի կառավարման միջև կապը

Գոյություն ունի ուղղակի կապ բանկի ռազմավարական, գործառնական նպատակների, հաշվետվությունների արժանահավատության, օրենսդրական համապատասխանության և բանկային ռիսկերի կառավարման միջև¹⁰: Բանկային ռիսկերի կառավարումը պետք է ներառի վերոնշյալ ութ բաղադրիչները, որպեսզի բանկը լիարժեքորեն հասնի ռազմավարական, գործառնական նպատակներին, հաշվետվությունների արժանահավատությանը և գործունեության համապատասխանությանը: Աղյուսակ 1-ում ներկայացված է բանկի նպատակների իրականացման, ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման շրջանակի միջև առկա կապը:

Որպեսզի ռիսկերի կառավարումն իրականացվի արդյունավետ, թե ոչ, վերը նշված ութ բաղադրիչների վերահսկումը պետք է իրականացվի արդյունավետ: Այդ բաղադրիչներով կարելի է աուդիտի ենթարկել բանկային համակարգի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների, տարբեր բիզնես գործընթացների կառավարումը: Բաղադրիչներն արդյունավետ ձևով վերահսկելու դեպքում բանկի ղեկավարության համար կարող է պարզ դառնալ, թե արդյոք բանկն իրականացնո՞ւմ է ռազմավարական նպատակները, աշխատակիցների կողմից պատշաճ կիրառվո՞ւմ են օրենքները, կարգերն ու ներքին իրավական ակտերը, արժանահավա՞տ են ներկայացվող հաշվետվությունները, նվազագույն մակարդակո՞ւմ են բանկային գործունեության գործընթացներում առկա թերություններն ու սխալները:

Եթե բոլոր գործընթացներում ռիսկերի կառավարումն իրականացվում է արդյունավետ և համակարգված ձևով, ապա բանկային ռիսկերը գտնվում են նվազագույն մակարդակում և լրջորեն վերահսկվում են:

¹⁰ Տե՛ս www.COSO.org



Ռիսկերի կառավարման վերոնշյալ գործընթացը բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը օգնում է ստուգումներն իրականացնել ոչ միայն կենտրոնացած վերահսկման, գործարքների ճշտության և կարգերի համապատասխանության միջոցով, այլև հետևելու և տարբերակելու բանկի տարբեր ստորաբաժանումներում, տարբեր գործընթացներում առկա ռիսկերը, գնահատելու դրանց կառավարման արդյունավետությունը, կառուցելու ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որը ներառում է հետևողական քաղաքականություն, գործընթացներ, աշխատակազմ և ներքին հսկողական համակարգեր:

ГОАР СИМОНЯН – Внутренний аудит банковской системы и единые рамки управления рисками. – Внутренние аудиторы играют важную роль в создании эффективной системы управления. Независимо оценивая систему внутреннего контроля, они повышают её эффективность. Часто внутренний аудит выступает в качестве мониторинга. Для сохранения своей независимости внутренние

аудиторы не должны брать на себя непосредственную ответственность за конкретные проекты и их осуществление. Чтобы повысить свою эффективность, банковской системе Армении нужно продвигаться от традиционного аудита к аудиту, основанному на оценке рисков, поскольку управление рисками – чрезвычайно важный инструмент контроля за деятельностью банковской системы.

GOHAR SIMONYAN – *Internal Audit of Banking System and United Framework of Risk Management.* – Internal auditors play an important role in evaluating the effectiveness of control systems. As an independent reporter to the top management, internal audit is able to assess the internal control systems implemented by the organization and contribute an ongoing effectiveness. As such, internal audit often plays a significant monitoring role. In order to preserve its independence of judgment Internal Audit should not take any direct responsibility in designing, establishing, or maintaining the controls it is supposed to evaluate. It may only advise on potential improvement to be made. To be more effective internal audit of Armenian Banking system should move towards from the Traditional audit risk approaches to the Risk-Based Audit approach. The above mentioned model will provide one step to prepare Risk Based Audit Plan, to assess the most risky entities of the bank.